ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 հոկտեմբերի 2023 թվականի N 1837 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 21-Ի N 605-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի ապրիլի 21-ի «Քաղաքացիական և ծառայողական զենքի ու դրա փամփուշտների տեխնի-կական կանոնակարգը հաստատելու մասին» N 605-Ն որոշման (այսուհետ՝ որոշում)՝

1) նախաբանը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Հիմք ընդունելով «Տեխնիկական կանոնակարգման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի «ա» ենթակետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.».

2) որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի՝

ա. ամբողջ տեքստում «Զենքի մասին» Հայաստանի Հանրապետության» բառերը փոխարինել «Զենքի շրջանառության կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության» բառերով,

բ. 1-ին կետի «95 06 99 9000 Սպորտային աղեղներ և արբալետներ,» տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«95 06 99 9000 Ունիվերսալ սպորտային/որսորդական աղեղներ (27 կգուժ-ից բարձր աղեղային ուժ) և արբալետներ,»,

գ. 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքացիական և ծառայողական զենքի ու դրա փամփուշտների բոլոր մոդելների իրացումը պետք է իրականացվի «Զենքի շրջանառության կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան և ուղեկցվի համապատասխանության նշանի մակնշմամբ և համապատասխանության սերտիֆիկատով»,

դ. 9-րդ կետի առաջին պարբերությունից հանել «և կառուցվածքով օդաճնշիչ զենքին նմանվող արտադրանքների» բառերը, իսկ 2-րդ պարբերությունից հանել «և կառուցվածքով օդաճնշիչ զենքին նմանվող» բառերը,

ե. 21-րդ կետում «Ե 1 ընթացակարգը» բառերը փոխարինել «սերտիֆիկացման համար նախատեսված ընթացակարգերից որևէ մեկը» բառերով, իսկ 31-րդ կետում «Ե1 համապատասխանության գնահատման ընթացակարգով» բառերը փոխարինել «սույն տեխնիկական կանոնակարգի 21-րդ կետում նշված համապատասխանության գնահատման ընթացակարգով» բառերով,

զ. 20-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 20.1-ին կետով՝

«20.1. Ունիվերսալ սպորտային/որսորդական աղեղների անվտանգության պահանջները, ինչպես նաև մակնշմանը, փաթեթավորմանը ներկայացվող պահանջները պետք է համապատասխանեն ԳOUS Ռ 52115 ստանդարտով սահմանված պահանջներին»,

է. 48-րդ կետում «Համապատասխանության գնահատման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով» բառերը փոխարինել «Տեխնիկական կանոնակարգման մասին», «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքներով և այլ իրավական ակտերով» բառերով,

ը. IX գլխի տեխնիկական կանոնակարգի պահանջների կատարումն ապահովող ստանդարտների ցանկը լրացնել հետևյալ պարբերություններով՝

«

ՀՍՏ ԳՕՍՏ Ռ 52115	Հրաձգային նետողական զենքեր. Աղեղներ ունիվերսալ սպորտային և որսորդական, աղեղներ սպորտային, աղեղներ հանգստի և ժամանցի համար և դրանց նետերը. Ընդհանուր տեխնիկական պահանջներ. Անվտանգության փորձարկման մեթոդներ
ՀՍՏ ԳՕՍՏ Ռ 51549	Նետողական զենք. Արբալետներ և աղեղներ սպորտային. Արբալետներ և աղեղներ հանգստի և ժամանցի համար. Տերմիններ և սահմանումներ

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

26.10.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ